# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 դեկտեմբերի 2023 թվականի N 279 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-081-0021-0001-ԻՑ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳԱՅԱՆԵ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ՝ 172,93 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ, 122,46 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 64-Ա որոշումը և քանի որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացիներ Սմբատ Ռուբիկի Մարտիրոսյանը ու Գայանե Անուշավանի Մարտիրոսյանը իրենց 2023 թվականի հոկտեմբերի 18-ի դիմումի համաձայն, ընդունել են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարվող 172.93 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքը, 122.46 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը և դրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականությունը հանդիսացող 08-081-0021-0020 կադաստրային ծածկագրով 0.033067 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության հողամասի ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը, սահմանված կարգով ու ժամկետում ամբողջությամբ կատարել են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 23-ի թիվ 222-Ա որոշմամբ օրինական ճանաչված շինությունների ու համապատասխան հողամասի համար սահմանված վճարումները, տվյալ գույքային միավորի նկատմամբ համայնքի անվամբ իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները և հաշվի առնելով, որ Սմբատ Ռուբիկի Մարտիրոսյանը 2023 թվականի նոյեմբերի 11-ին մահացել է (պետական վկայական մահվան մասին ԲԱ782266), **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությունը հանդիսացող 08-081-0021-0020 կադաստրային ծածկագրով 0.033067 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության հողամասը և նրա վրա

ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 157,03 քառակուսի մետր ներքին մակերեսով և 172.93 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքը, 118,74 քառակուսի մետր ներքին մակերեսով և 122.46 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը (հիմքը՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11092023-08-0023 վկայական, հասցեն՝ մարզ Շիրակ, համայնք Աշոցք, գյուղ Մեծ Սեպասար, 13-րդ փողոց, թիվ 1) ուղակի վաճառքով, գնման նախապատվության իրավունքով՝ **363620 (երեք հարյուր վաթսուներեք հազար վեց հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ** արժեքով, որից՝ **316660** Հայաստանի Հանրապետության դրամը շինություններին արժեքն է, իսկ **46960** Հայաստանի Հանրապետության դրամը՝ հողամասի, օտարել կառուցապատողին՝ Գայանե Անուշավանի Մարտիրոսյանին (անձնագիր՝ AV0424324, տրված՝ 15.09.2022թ, 034-ի կողմից, բնակության հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Մեծ Սեպասար, 13-րդ փողոց, բնակելի տուն 1)

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2023 թվականի դեկտեմբերի 4
գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 դեկտեմբերի 2023 թվականի N 280 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՌԱՖԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ, ՎԱՐՍԵՆԻԿ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ, ՆՈՐԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ, ԷԼԻԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԼՈՒԻԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-0081-009-009-1 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2023 թվականի նոյեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված Վարսենիկ Շահինյանի դիմումը, **որոշում եմ**.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Մեծ Սեպասար գյուղում գտնվող քաղաքացիներ Ռաֆիկ Պողոսյանին,Վարսենիկ Շահինյանին, Նորիկ Պողոսյանին, Էլիզա Պողոսյանին և Լուիզա Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, գյուղ Մեծ Սեպասար, 1-ին փողոց, 1-ին փակուղի, բնակելի տուն 3, հասցեում գտնվող, 08-081-009-009-1 կադաստրային ծածկագրով բնակելի տունը /գրանցված՝ 2002 թվականի հոկտեմբերի 5-ին, վկայական N 457616/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Մեծ Սեպասար, 1-ին փողոց, 1-ին փակուղի, բնակելի տուն 3:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2023 թվականի դեկտեմբերի 4
գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբերի 2023 թվականի N 281 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՉԱՊԱԵՎ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ, ԷՄՄԱ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ, ՆԱՐԻՆԵ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԵՎ ՍԱՇԱ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-074-002-008-1 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2023 թվականի դեկտեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված Էմմա Գալստյանի դիմումը որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ձորաշեն գյուղում գտնվող քաղաքացիներ Չապաև Գալստյանին, Էմմա Գալստյանին, Նարինե Գալստյանին և Սաշա Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Սարապատ համայնք, գյուղ Ձորաշեն, 1-ին փողոց, բնակելի տուն 15 հասցեում գտնվող, 08-074-002-008-1 կադաստրային ծածկագրով բնակելի տունը /գրանցված՝ 2004 թվականի հոկտեմբերի 29-ին, վկայական N 1229833/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Ձորաշեն, 1-ին փողոց,բնակելի տուն 15:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2023 թվականի դեկտեմբերի 7
գյուղ Աշոցք